Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1707336033 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<13>> 02 2018թ. ՎՎ-1102Ճ-18/12Վ-2081 ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արման Գրիգորյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Ռ.Մելիքյան փողոցի 2/3 շենքի 12 բնակարանի բնակիչ Արման Գրիգորյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1707336033 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ:

Դիմումի քննարկման և Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1707336033 որոշմամբ արձանագրված իրավախախտումն ամրագրած տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն օրինական է, իրավաչափ և այն անվավեր ճանաչելու որևէ հիմք առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1707336033 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արման Գրիգորյանին և ՃՈ ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե.Կարապետյան